ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» _____ 2009թ. N _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՇԵՆԳԱՎԻԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 25-ի «Իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառման կարգը հաստատելու մասին» հ.670 որոշմամբ `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Դադարեցնել Երևանի համայնքային ենթակայության «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկի գործունեությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևանի համայնքային ենթակայության «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին » Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Երևանի քաղաքապետարան է դիմել Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարը՝ «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով, որ «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկը դպրոցական կրթության գործունեություն չի իրականացնում, անհրաժեշտություն է առաջացել գործող օրենսդրությանը համապատասխան դադարեցնել նշված հիմնարկի գործունեությունը:

Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանի համայնքային ենթակայության «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին » Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

«Երևանի համայնքային ենթակայության «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի ավագանու որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ